

ԾԱՆՐ ԿՈՐՈՒՄՏ ՄԸ

Posted on May 10, 2021 by Keghart



Category: [Opinions](#)




6 Մայիս 2021

1952 (Թրիփոլի, Լիբանան) - 2021 (Լոս Անճելըս)

Վաղաժամ ծանր կորուստ մը կրեց Գալիֆորնիոյ, յատկապէս Լոս Անճելըսի հայութիւնը՝ Արա Ահարոնեանի անժամանակ մեկնումով: Ան կը սատարէր keghart.org-ին եւ յաճախ [կը մասնակցէր իր յօդուածներով](#):

Արա Ահարոնեան այն քիչերէն էր, որ ՌԱԿ-ի մէջ բարձր եւ պատասխանատու պաշտօններու վրայ գտնուելուն զուգահեռ լայն կապեր հաստատած էր նահանգային եւ գաւառական բարձրաստիճան պաշտօնեաներու հետ՝ ներկայացնելով հայութիւնը

շահագրգռող ինդիւիդներ եւ պահանջներ: Արա Ահարոնեան գրչի մարդ էր նաեւ: Դեռ աշակերտական եւ ուսանողական տարիներէն յօդուածներ ստորագրած է «Չարթօնք»ի, «Պայքար»ի, «Նոր Օր»ի եւ այլ կուսակցական թերթերու մէջ:



Վերջին երեսուն տարիներու ընթացքին ան հրատարակած էր քանի մը կարեւոր գրքոյկներ, ինչպէս՝ «Երախտաւորներու ուղի» Ա. եւ Բ. Հատորներ, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն», հայերէն եւ անգլերէն լեզուներով (2001, 2011), «Հայաստանի Հանրապետութեան Մարտահրաւերները» (2014): Վերջին տասնամեակին Ա. Ահարոնեան անխոնջ կերպով լծուած էր ՌԱԿ-ի երախտաւորները ընթերցող լայն հասարակութեան ներկայացնելու կարեւոր առաքելութեան, իսկ վերջին քանի մը տարիներուն ան ամբողջ հոգիով ու մտաւորական ունակութիւններով կը պատրաստուէր լոյսին բերել ՌԱԿ-ի համապարփակ պատկերագարող պատմութիւնը՝ շուրջ 650 էջ:

Արմենական հանրապետության ժողովրդականացման մեջ:

Յիշատակութեան արժանի է իր գործօն մասնակցութիւնը [Արմենական շարժման](#) ստեղծման ուղղութեամբ Լուս Անճելոսի մեջ՝ 1980-ականներու վերջը եւ 1990-ականներու սկիզբը:



Իր մահը կը սգան անմիջական հարազատները, ՌԱԿ-ի, ԹՄՄ-ի, ՀԲԸՄ-ի եւ Յովակիմեան-Մանուկեան վարժարանի մեծ ընտանիքը: Այս տխուր առթիւ keghart.org-ի խմբագրական կազմը իր խորագգած ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն:

There are no comments yet.